



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՎԵՐԱՍՈՒՏԻ ԻՐ ՊԱՏՉԱՄԻՆ ՄԷՋ

**ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԱՐԺԷՔԻՆ ՎԱՅԵԼՉՈՒԹԵԱՄԲ
 ՏՕՆԵՆՔ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԻՆ**

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Հայ Դպրոցին վերամուտը միշտ ալ հոգեխոզով բան մը ունի. պատանի աշակերտներուն «ճռուողիւնը», մանկապարտեզի մանուկներուն արցունքով խառն ժպիտները եւ դաստիարակներուն տենդագին աշխատանքի վերադարձը կը միախառնուին ծնողներուն խանդավառութեան, ազդանշանը տալով աշխատանքի տարուան մը, որ պիտի գայ Նոր օղակ մը աւելցնելու հայակերտումի ու մարդակերտումի անսխիւթական շղթային վրայ: Աւելին, տրուած ըլլալով, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2006 տարին հռչակած է իբրեւ Հայ Դպրոցի տարի, ուսումնական այս տարեշրջանին մեկնարկը յատկանշուեցաւ Նաեւ Վեհափառ Հայրապետին պատգամին արժեւորումով:

Ահա թէ ի՞նչ մթնոլորտ կը տիրեր հայկական մեր վարժարաններուն շրջափակներուն մէջ, Չորեքշաբթի, 6 Սեպտեմբերի առաւօտուն, ուսումնական 2006-2007 տարեշրջանին սկսումին առիթով: Արեւմտեան մեր Թեմի Ազգային Վարժարաններուն մէջ, համաձայն տարիներու աւանդութեան, վերամուտը յատկանշուեցաւ իւրայատուկ արարողութեամբ, որ սկսաւ աղօթքի պահով մը, ապա Նաեւ տնօրէններուն ու վարիչներուն կողմէ ողջոյնի խօսքով ու առաջին պատգամներով:

Աղօթքի պահը առաջնորդեցին մեր հոգեւոր հայրերն ու եկեղեցիներու հոգեւոր հովիւները: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան վերամուտի առաւօտը բոլորեց Ֆերահեան վարժարանի երկու բաժիններուն՝ Էնսիւնոյի ու Նորթ Յիլզի համալիրներու աշակերտներուն ու դաստիարակներուն հետ, Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան այցելեցին յաջորդաբար Ռոզ եւ Ալեք Փիլիպոս եւ Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանները, իսկ ծխական միւս շրջաններու հոգեւոր հովիւները եղան իրենց շրջաններու վարժարաններու աշակերտութեան հետ:

Աղօթքէն ետք, մեր հոգեւոր հայրերը ընթերցեցին Առաջնորդ Սրբազան Հօր պատգամը, ուղղուած վարժարաններու տնօրէնութեան, ուսուցչական կազմին, եւ աշակերտներուն: Ստորեւ կու տանք Սրբազան Հօր պատգամը ամբողջութեամբ:

«Սիրելի Տնօրէնութիւն, ուսուցչական կազմ եւ աշակերտներ,

«Փառք կու տանք Աստուծոյ, որ մեզի շնորհեց անվտանգ արձակուրդ մը եւ ահա, վերամուտի այս օրը, դարձեալ հաւաքուած էք Ձեր դպրոցին մէջ, կը պատրաստուիք 2006-2007 ուսումնական տարուան: Փառք կու տանք Աստուծոյ, որ մեր երկիրն ու մեր հայրենիքը անվտանգ պահեց վերջին ամիսներուն, որովհետեւ, սիրելիներ, վստահ եմ որ ծանօթ էք մեզմէ հեռու բայց մեր սիրտերուն մօտիկ Լիբանանի վիճակին, գիտէք, որ Լիբանանի հայութիւնը եւս դժուար օրեր ապրեցաւ ու ձեզի հասակակից լիբանանահայ աշակերտները ամառնային արձակուրդը խաղաղօրէն չվայելեցին, ինչպէս ըրիք դուք:

«Սիրելիներ,

«Իւրաքանչիւր վերամուտի, նաեւ տարուան ընթացքին տօնական զանազան առիթներով մենք առիթը կ'ունենանք խօսելու մեր կեանքերուն մէջ ուսման ու մանաւանդ Հայ Դպրոցին դերին մասին: Այս տարի, սիրելիներ, մենք յաւելեալ պատճառ մը ունինք մեր յարգանքի բաժինը մատուցելու Հայ Դպրոցին, որովհետեւ, ինչպէս գիտէք, 2006 տարին հռչակուած է Հայ Դպրոցի Տարի: Վստահ եմ որ չէք մոռցած, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հայրապետական սրբատառ կոնդակով մը 2006 տարին հռչակած է Հայ Դպրոցի տարի: Վեհափառ Հայրապետը կը յիշէք, չէ՞. ան անցեալ տարի Հոկտեմբերին մեզի այցելեց. ձեզմէ շատեր առիթը ունեցան Կլենտէյլի High Schoolի սրահին մէջ դիմաւորելու զինք, երգեր ու արտասանութիւններ հրամցուցին իրեն ու լսեցին Նորին Սրբութեան պատգամը: Վեհափառ Հայրապետը Անթիլիաս իր վերադարձէն ետք հայութեան ու մանաւանդ հայկական դպրոցներու մեծ ընտանիքին պատգամ ուղղեց, որ 2006 տարուան ընթացքին, յատուկ հանդիսութիւններով նշենք Հայ Դպրոցի Տարին: Ուրախ եմ, որ մեր կարգ մը դպրոցները արդէն որոշ հանդիսութիւններ կազմակերպեցին այս նպատակով, սակայն վերամուտի այս օրուան առիթով, իմ փափաքս ու թելադրանքս է, որ բոլորս՝ միասնաբար, եւ մեր դպրոցներուն արժէքին վայել հանդիսաւորութեամբ տօնախմբենք Հայ Դպրոցի Տարին:

«Ատիկա չի բաւեր. իմ թելադրանքս է, որ իւրաքանչիւր հայ աշակերտ ամէն օր, դպրոցական թէ արձակուրդի օրերուն, անդրադառնայ հայ դպրոցի արժէքին, անդրադառնայ, թէ ինք բախտաւոր է հայ դպրոցի մը աշակերտը ըլլալուն, լա՛ւ սորվի մեր լեզուն, մեր պատմութիւնը, ճանչնայ մեր մայր հայրենիքը՝ Հայաստանը, եւ մտածէ թէ ինք ինչպէ՛ս կրնայ մասնակից ըլլալ մեր մշակոյթին զարգացման, մեր իրաւունքներուն իրականացման: Որովհետեւ, սիրելիներ, ա՛յս է Հայ Դպրոցին նպատակը:

«Ես կը մաղթեմ, որ 2006-2007 ուսումնական տարին գեղեցիկ նոր օղակ մը աւելցնէ մեր թեմի հայկական դպրոցներու աշխատանքի շղթային վրայ. կ'աղօթեմ առ Աստուած, որ մեր վարժարաններու տնօրէններուն, վարիչներուն, ուսուցչական կազմերուն ու պաշտօնէութեան ընծայէ անսպառ կորով ու համբերութիւն, որպէսզի մեր աշակերտները օժտեն հոգեկան ու գիտութեանց հարստութիւններով:

«Թող օրինեալ ըլլան բոլոր հայ ծնողները, մանաւանդ անոնք՝ որոնք իրենց զաւակներուն հոգեկան ու մտային հարստացման գործը կը վստահին հայկական մեր վարժարաններուն: Վերջապէս, կ'աղօթեմ առ Երկնաւոր Հայրը, որպէսզի իր Սուրբ Աջը հովանի պահէ հայկական բոլոր վարժարաններուն վրայ, օրինէ վաստակը մեր Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինին, բարերարներուն, միութիւններուն ու կազմակերպութիւններուն, որոնք անփոխարինելի գործ կ'ընեն

մեր վարժարաններուն կարիքները հոգալու, յաջողութիւնները աւելի եւս յառաջ տանելու եւ Հայ Դպրոցի առաքելութիւնը անշեղ պահելու համար»:

Մեր վարժարաններուն ուսումնական 2006-2007 տարին ճամբայ ելաւ այսպիսի իւրայատուկ մթնոլորտի մէջ, նոր սերունդի դաստիարակութեան ճամբուն մէջ նոր իրազործումներու կամքով:

Բարի երթ մեր դաստիարակներուն, աշակերտութեան, ծնողներուն ու մեր վարժարաններու բոլոր հովանաւորներուն:

ON THE FIRST DAY OF SCHOOL

LET US CELEBRATE THE YEAR OF THE ARMENIAN SCHOOL

DECLARED THE PRELATE

On the morning of Wednesday, September 6, the schools of the Western Prelacy commenced the 2006-2007 academic year with traditional ceremonies including opening prayer and remarks by principals and directors. Since 2006 was declared “The Year of the Armenian School” by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, the opening ceremonies were marked with the Prelate’s message of “Let us celebrate the year by highlighting the values of the Armenian school”.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited both the Encino and North Hills campuses of Ferrahian School, while Prelacy Christian Education Department Co-Directors Very Rev. Fr. Muron Aznikian and Fr. Barthev Gulumian visited Rose and Alex Pilibos High School and Vahan and Anoush Chamlian School respectively. Parish priests visited schools in their parishes where they conveyed the Prelate’s message to the administrators, staff, and students.

The Prelate began his opening remarks by thanking the Lord for a safe return to the academic year following summer break. He stressed that the start of each academic year offers us the opportunity to highlight the role that education and the Armenian School play in our collective lives, adding that this year a special emphasis is placed on that role in response to the Pontifical declaration of 2006 as the Year of the Armenian School. “I am pleased that many of our schools have already planned events in honor of the Armenian School, however, it is my wish that we collectively celebrate the Year of the Armenian School. It is also my wish that each individual student recognize the value of attending an Armenian school, to learn our language and history, and to participate in the advancement of our culture, because this is the mission of the Armenian school. I pray to God to grant strength and patience to our principals, directors, teachers, administrators, and parents, to enrich the spirit and minds of our youth. Finally, I pray to Almighty God to keep a watchful eye over our schools and to bless the endeavors of the Board of Regents, donors, organizations, and committees who contribute to the unwavering mission of the Armenian School with their continuous and invaluable support.”

The Prelate concluded by wishing success to the educators, administrators, students, and parents during the academic year.